Մրցույթ՝ ՀՀ Տավուշի մարզի «Դիլիջան քաղաքի թիվ 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (12 դասաժամ), աշխարհագրության (6 դասաժամ), մաթեմատիկայի (13 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է 2 փուլով՝թեստավորման և հարցազրույցի:
Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
-դիմում(Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ(դիպլոմ)
-անձը հաստատող փաստաթուղթ,
-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
-ինքնակենսագրություն(Ձև 5)
-այլ պետությունների քաղաքացիները՝ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են հոկտեմբերի 14-ից հոկտեմբերի 27-ը ներառյալ ամեն օր ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2022 թ. հոկտեմբերի 31-ին՝ ժամը 14:00-ին,** ՀՀ Տավուշի մարզի թիվ 6 հիմնական դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ /077/ 23-46-62 հեռախոսահամարով: